ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3351-Ա « 06 » հուլիսի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.95 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ԱԶՆԻՎ ՄԻՍԱԿԻ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-ին, 37.2-րդ, 39-րդ կետերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2026 թվականի հունիսի 8-ի N 756 արձանագրությունը՝

1. Ազնիվ Միսակի Ծառուկյանին՝ 2026 թվականի հուլիսի 6-ից, 1 տարի փորձաշրջանով՝ նշանակել «Երևանի Ղ. Ալիշանի անվան հ.95 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2026 թվականի հուլիսի 6-ից մինչև 2031 թվականի հուլիսի 6-ը ներառյալ:

2. «Երևանի Ղ.Ալիշանի անվան հ.95 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ազնիվ Ծառուկյանի փորձաշրջանի ղեկավար նշանակել «Երևանի հ.187 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արմեն Հարությունյանին:

3. «Երևանի Ղ.Ալիշանի անվան հ.95 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Լիանա Գրիգորյանին ազատել

նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

4. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ